Հուսիկ Արա

Թեբեական

Նա իմ ննջարանը մտավ խարխափ ու անորոշ՝
որպես կեսգիշեր,
և հեռացավ առավոտի քայլերով՝ պաղլույս ու դեռ անարև:

Քաղաք, միշտ մուտք ու վերադարձ,
ո՞ւր տարար առավոտս հենց նոր տեսած .
ես փնտրել եմ նրան ամբողջ մի կյանք,
սպասել բոլոր ժամերի մեջ՝
վստահելով այս հանդիպմանը առանց պայման:

Ամեն օր քո մեջ շրջած այգի,
չտեսա՞ր նրան .
իմ աչքերն ուներ,
իմ մարմնի գույնն ու
իմ հայացքով էր .
անհնար էր շփոթել նրան:

Փողոցներ, որ խնամքով պահում եք ոտնահետքերս,
և կամուրջներ՝ կախված ջրանցքներին,
իմ խոսքն է նրա լեզուն,
իմ բառն է նրա շուրթերին,
և ամեն սեթևեթն իմ բանաստեղծությունն է .
չէիք կարող չճանաչել:

Նրա ափերի մեջ իմ սիրտն է,
իսկ մատների տակ բարակում է հոգիս,
և իմ սպասման երկար արյունն է հագուստին .
դուք պե՛տք է ետ պահեիք նրան,՝
ծառուղում ու նստարանին համբուրվող զույգեր:

Ի՞նչ ճամփաների հիմա դիմեմ ես՝
արևածա՞գ, թե՞ մայրամուտ,
որ մինչև օրը և ժամս վերջին տեղ հասնեմ:

Իսկ դու, քաղաքի դարպասը հսկող
թեբեական հայացքով կույր գուշակ,
ասում ես՝ քո ննջարանը գնա,
եթե նա է, կգա առավոտի քայլերով,
որ չի գնացել: